
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐԶԵՐԵՆԻ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ ՁԵՎԱ-
ԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ Լ. Ա., ՍԱՖԱՐՅԱՆ Ա. Վ.

Անորոշ դերբայն արտահայտում է գործողության կամ եղելության գաղափար՝ առանց եղանակը, դեմքը, թիվը, ժամանակը ցույց տալու: Որոշ լեզուներում (հունարեն, լատիներեն) այս դերբայը կարող է արտահայտել նաև ժամանակի իմաստ¹: Հենց այս հատկությունն էլ անտիկ քերականներին հիմք է տվել այն եղանակ համարելու: Հայ քերականության մեջ ևս անորոշը մինչև Ա. Բագրատունին համարվել է աներևույթ կամ աներևույթ եղանակ: Բայական այս ձևը անորոշ անվանումը ստացել է ավելի ուշ շրջանում²: Լեզվաբանների դիտարկմամբ՝ անորոշությունը ևս վիճակ է, որն իբրև դերբայական իմաստ՝ ավելի հատկանշական է դառնում անորոշ դերբայի համար, մանավանդ մյուս դերբայների դերբայական իմաստների համեմատությամբ³: Ակադ. Ա. Կոնոնովը թուրքերենում անորոշ դերբայը համարում է բայի դրսևորման ձև՝ դրա համար օգտագործելով *անորոշ-ինֆինիտիվ կամ գործողության անուն (masdar) եզրերը*: Գործողության անունների համար որպես կարևոր հատկանիշ առանձնացնում է հետևյալը՝ գործողության անունները (անորոշ) նախադասության կազմում (հետադրությունների և հատուկ բառերի համաձայնությամբ) հանդես են գալիս անուններին հատուկ բոլոր գործառույթներով՝ դառնալով. ա) նախադասության գլխավոր անդամ, բ) նախադասության երկրորդական անդամ⁴:

Թուրք լեզվաբան Մ. Էրգինը, թուրքերենի անորոշի դրսևորման ձևերը քննելով՝ բառակազմության բաժնում, դրանք համարում է բայանուններ՝ տալով հետևյալ բնութագիրը. «Բայից գոյական կազմող ածանցները այնպիսի ածանցներ են, որոնք օգտագործվում են բայի արմատից և հիմքերից նոր գոյականներ կազմելու նպատակով: Այս ածանցները կարող են կցվել բայական արմատներին, գոյականից կազմված բայական հիմքերին, ինչպես նաև բայից կազմված բայական հիմքերին: Այսինքն՝ բայից գոյական կազմող ածանցները կցվում են գոյականից բայ կազմող և բայից բայ կազմող ածանցներից հետո»⁵: Մ. Էրգինի դիտարկմամբ՝ թուրքերենում նմանատիպ կիրառությունները բավական շատ են և տարածված: Նրա

¹ Պետրոսյան Հ. Զ., Հայրենագիտական բառարան, Ե., 1987, էջ 45:

² Աբրահամյան Ա. Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական հատկանիշները, Ե., 1953, էջ 52:

³ Նույն տեղում, էջ 51:

⁴ **Кононов А. Н.**, *Грамматика современного турецкого литературного языка*, М.-Л., 1956, с. 437: Տե՛ս նաև **Սաֆարյան Ալ., Սահակյան Լ., Ամիրխանյան Լ.**, Ժամանակակից թուրքերենի դերբայների դասակարգման հիմնահարցերի շուրջ (Արևելագիտության հարցեր, Ե., 2006, հ. VI, էջ 296-317):

⁵ **Ergin M.**, *Türk Dil Bilgisi, Sofya, 1967, s. 175.*

կարծիքով, թուրքերենի գոյականների մեծ մասը բայերից է կազմված, և նկատվում է բայերից գոյական կազմող ածանցների թվի ավելացման մեծ միտում: «Բառակազմական վերջածանցների մեջ ևս շատ են բայերից գոյական կազմող ածանցները, որոնց մեծ մասի կենսունակության աստիճանը բարձր է այնքան, ինչքան բառափոխական վերջածանցներինը: Մակայն սրանց հետ մեկտեղ թուրքերենում կարելի է հանդիպել նաև քիչ գործուն և շատ հազվադեպ օգտագործվող ածանցների: Բայից գոյական կազմող ածանցներն էլ օժտված են այնպիսի գործառնություններով, որոնց միջոցով կազմվում են տարբեր տեսակի խնդիրներ ընդունող գոյականներ»⁶:

Ն. Քոչի սահմանմամբ՝ «բայի արմատին և հիմքին ավելացնելով **-mak (mek)**, **-ma (me)**, **-ış (iş, uş, üş)** ածանցները, կազմում են բառեր, որոնք անվանում են անորոշ դերբայներ (գերմ.՝ **Infinitiv**, ֆրանս.՝ **infinitif**, անգլ.՝ **infinitive**), ավանդաբար՝ **İsim Fiiller** (բայանուններ) և **Mastarlar** (մասդարներ)»⁷:

Ա. Կոնոնովը գործողության անունների շարքում նշում է նաև **-dik** ածանցով կազմված բայական ձևերը⁸, իսկ թուրք քերականները այս կադապարաձևը դիտարկում են որպես մակբայական դերբայի դրսևորում⁹:

Մ. Էրգինը, քննելով **-mak** ածանցը՝ իր գործառնություններով հանդերձ, այն համարում է գոյականակերտ ածանց նշելով, որ առանց բացառության կարող է կցվել բոլոր բայական արմատներին և հիմքերին: «Թուրքերենում այս ածանցը հնուց ի վեր բայից գոյական կազմող ածանցների շարքում գլխավոր տեղն է զբաղեցրել, որի հիմնական գործառնությամբ բայից գործողություն ցույց տվող գոյականներ կազմվել են»: **-Mak**-ով կազմված բայաձևերը, ըստ թուրք լեզվաբանի, լեզվական միավորներ են, որոնք ցույց են տալիս բայի գործողություն, բայց չունեն առանձին կիրառություն: Էրգինը ընդգծում է, որ այդ լեզվական միավորները հանդես են գալիս միայն *դեմքի*, *ժամանակի*, *ձևի* (և այլ) ածանցների կրգմամբ: Ահա այս արմատների և հիմքերի գործողությունը արտահայտելու համար վերջիններիս կցվում է **-mak**, **-mek** ածանցը, և այս ճանապարհով առաջ եկած բառերն անվանվում են բայանուններ՝ *aç-mak* բացել, *ara-mak* փնտրել, *başla-mak* սկսել, *gel-mek* գալ, *bildir-mek* տեղեկացնել, *düşün-mek* մտածել: Այս բայանուններին թուրք քերականները տալիս են նաև մասդար (ինֆինիտիվ, անորոշ դերբայ), իսկ **-mak**, **-mek** ածանցին՝ մասդարական ածանց (ինֆինիտիվի ածանց, անորոշ դերբայի ածանց) անվանումը: Ըստ Մ. Էրգինի՝ մասդար տերմինը ամբողջովին չի բնութագրում թուրքերենի բայանունների բնույթը: «Անհրաժեշտություն չկա, որպեսզի թուրքերենում մասդարը ընդունվի որպես առանձին բառ, ... այս ձևերը բայից **-mak**, **-mek** ածանցի կցմամբ կազմվում են միայն գոյա-

⁶ Նույն տեղում:

⁷ Meriç D., Meriç F., *Türkçe Dilbilgisi, Istanbul, 2003, s. 154*, Hengirmen M., *Türkçe Dilbilgisi, s. 248-249*.

⁸ Кононов А. Н., նշվ. աշխ., էջ 437-454:

⁹ Koç N., *Yeni Dilbilgisi, İnkılap Kitabevi, Istanbul, 1990, s. 408-411*.

կաններ և չունեն որևէ այլ կիրառություն»¹⁰: Մ. Էրգինը, փաստորեն, թուրքերենի անորոշ դերբայը փորձում է տարրալուծել գոյական անվան մեջ՝ այն համարելով գոյականի դրսևորման ձև: Միաժամանակ, **-mak**, **-mek**-ով կազմված բառերը դժվար է միան գոյական համարել. սրանց ժըխտական ձևերը դրսևորում են մի շարք բայական առանձնահատկություններ և դրանով իսկ չեն կորցնում իրենց բայական բնութագիրը¹¹:

Նշված **-mak**, **-mek** ածանցով անորոշ դերբայը դրվում է բոլոր հոլովներով՝ բացառությամբ սեռականի: Ի տարբերություն **-ma (me)**, **-ış (ış, uş, üş)**, **-makık**, **-meklik** անորոշի ձևերի՝ **-mak**, **-mek**-ով կազմված անորոշ դերբայը պատկանելության և հոգնակի թվի ածանցներ չի ստանում: Ա. Կոնոնովը անորոշի այս ձևը բնութագրում է «ավելի քիչ ուղղական, քան **-ma**-ով անորոշը, թեև այս երկու դերբայական ձևերն էլ արտահայտում են իրական գործողություն, ինչպես նաև՝ պոտենցիալ գործողություն»¹², իսկ **mak**, **-mek**-ով անորոշը չի ստանում պատկանելության ածանցներ, բնականաբար, չի կարող դառնալ նախադասության երկրորդ կենտրոն: Նախադասության շղթայում այն իրականացնում է ցանկացած շարահյուսական գործառույթ՝ բնորոշ գոյականին: Սակայն սովորական գոյականից տարբերվում է, քանի որ իր բայական բնույթի շնորհիվ կարող է ունենալ նախադասության երկրորդական կամ կախյալ անդամներ¹³:

Ժամանակակից թուրքական դասագրքերում **-mak**, **-mek** ածանցով կազմված անորոշ դերբային տրվում է հետևյալ բնութագիրը. «Այն դրսևորում է անվան առանձնահատկություններ: Այսինքն՝ այն գոյականի պես նախադասության մեջ կարող է հանդես գալ ենթակայի ու խնդրի շարահյուսական պաշտոններով, կարող է դառնալ բաղադրյալ ստորոգյալ (օժանդակ բայի հետ գործածվելով), ինչպես նաև ստանալ հոլովական ածանցներ»¹⁴: Եթե անորոշ դերբայը որոշյալ է, ստանում է հայցական հոլովի ածանց¹⁵ (այսուհանդերձ, ուղիղ խնդրի գործառույթում ավելի շատ հանդես է գալիս **-ma**, **-me** ածանցով անորոշը): Անորոշը՝ որպես անուղղակի խնդիր, հանդես է գալիս տրական, բացառական, ներգոյական հոլովներով (İzmir'e **gitmekten** vazgeçtim- Հրաժարվեցի Իզմիր գնալուց):

¹⁰ Ergin M., նշվ. աշխ., էջ 175:

¹¹ Մ. Էրգինը նշում է նաև, որ բայից գոյական կազմող ածանցների մեծամասնության կենսունակության աստիճանը հետադրությունների չափ բարձր է: Սրանք միջանկյալ տեղ են զբաղեցնում ածանցի և հետադրության միջև: Ինչ վերաբերում է **-mak**, **-mek** ձևին, ապա պետք է ասել, որ դա ավելի մոտ է հետադրություններին (Ergin M., նշվ. աշխ., էջ 175-176):

¹² Кононов А. Н., նշվ. աշխ., էջ 466: Տե՛ս նաև Шека Ю. В., *Интенсивный курс турецкого языка*, М., 1996, с. 48-49.

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 467:

¹⁴ Koç N., նշվ. աշխ., էջ 389:

¹⁵ Սաֆարյան Ալ., Սողոմոնյան Ա., Լոբնագոյան Տ., Թուրքերենի դասագիրք, Գիրք Ա, երկրորդ լրամշակված հրատարակություն, Ե., 2004, էջ 34, Սաֆարյան Ալ., Մելքոնյան Ռ., Հայ ուսանողներին թուրքերենի հայցական հոլովի ուսուցման առանձնահատկությունների մասին (*Проблемы романо-германской филологии: Теория и методика преподавания иностранных языков*, Е., 2006, с. 72-73).

Բացառական հոլովով դրվելիս այս դերբայը կարող է արտահայտել պատճառականության հանգամանք (Annelerin de ağlamaktan gözleri kör olmuş.- Նրանց մայրերի աչքերն էլ կուրացել են լալուց), իսկ տրական հոլովով դրվելիս՝ նպատակի հանգամանք (Bir gün en büyük kardeş ormana odun kesmeğe gitmiş.- Մի օր ամենամեծ եղբայրը անտառ ցախ կտրելու է գնացել)¹⁶:

Երբ **-mak** ածանցով կազմվող անորոշ դերբայից հետո կցվում են **-ı(i)**, **-a(e)** հոլովական ածանցները, ապա **-k**-ն ընկնում է, իսկ նշված ածանցներն էլ հանդես են գալիս **-y** հնչյունի հետ միասին՝ **-yı, -yi, -yu, -yü**¹⁷ (**Gidip onu gürmeyi istiyorum.** - Շատ եմ ուզում գնալ ու տեսնել նրան): Այս ածանցի **-k** բաղաձայնը հոլովման ժամանակ նաև ձայնեղանում և փափկանում է, որի հետևանքով այն հաճախ շփոթում են **-ma, -me**-ով կազմված անորոշների հետ: Չշփոթելու համար Մ. Էրգինն առաջարկում է ուշադրություն դարձնել այս դերբայների (կամ ինչպես ինքն է անվանում՝ անունների) միմյանց շատ մոտ գտնվող գործառությունների վրա. «Չպետք է մոռանալ, որ **-mak, -mek**-ով կազմված ձևը մատնացույց է անում գործողություն: Այս ածանցը շատ հազվադեպ օրինակներում է, որ կազմում է գործողություն ցույց չտվող գոյականներ: Օրինակ՝ **ye-mek** «ուտել», **çak-mak** գամել բայերի կողքին կարող ենք տեսնել գործողություն ցույց չտվող **ye-mek** «ուտելիք», **çak-mak** «հրահան» գոյականները»¹⁸: Այս երկու ածանցներով կազմված անորոշները, ունենալով որոշակի իմաստային նմանություն, հոլովման ժամանակ ևս հնչյունական տեսանկյունից հաճախ շփոթություն են առաջացնում՝ *gez-meğ-e, gez-me-y-e, bil-meğ -i, bil-me-y-i* և այլն¹⁹: Հայտնի է, որ **-mak, -mek**- անորոշ դերբայը կարող է ստանալ **-lı, -sız** բառակազմական ածանցները²⁰՝ կազմելով նոր բառեր՝ **ağlamaklı-ağlar gibi olan** պատրաստ՝ լաց լինելու կամ **ağlamaksızın** առանց լաց լինելու: Հայտնի է նաև, որ **-mak, -mek**-ով անորոշ դերբայը հանդես է գալիս նաև հետդիրների և սպասարկու բառերի հետ. **için, üzere||üzre, maksadiyle, -ile||-la, -le, (-makla || -mekle), beraber||birlikt, suret||suretile, sebebile||hasebile -mak, -mek** անորոշը **-ile||-la, -le (-makla||-mekle)** և **beraber||birlikte** բառերի հետ միասին արտահայտում է զիջման և պատճառի պարագայի հանգամանք²¹:

-Ma, -me ածանցով անորոշը հաճախ անվանում են նաև «վերջատած դերբայ»: Այն նախադասության կազմում հանդես է գալիս ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական անդամի պաշտոններում: Վերոնշյալ գործառություններում այս բայաձևը գործածվում է ինչպես պատկանելության

¹⁶ Տե՛ս **Коронов А. Н.**, նշվ. աշխ., էջ 469-470:

¹⁷ **Коç N.**, նշվ. աշխ., էջ 390:

¹⁸ **Ergin M.**, նշվ. աշխ., էջ 175-176:

¹⁹ Նույն տեղում, էջ 176-177:

²⁰ **Коç N.**, նշվ. աշխ., էջ 390:

²¹ Տե՛ս **Коронов А. Н.**, նշվ. աշխ., էջ 468-470:

ածանցների կցմամբ, այնպես էլ առանց այդ ածանցների: Պատկանելության ածանցների հետ միասին այն կազմում է նախադասության երկրորդ կենտրոնը և իր կատարած գործառնություն մոտենում է **-dik||-acak** ածանցներով կազմված դերբային: Ա. Կոնոնովի համաձայն՝ անորոշի այս ձևը հայցական և տրական հոլովաձևերում հանդես է գալիս առանց պատկանելության անծանցների՝ հանդիսանալով **-mak** ձևի քերականական հոմանիշը: Այն մատնացույց է անում իրական, առկա, ինչպես նաև ապագային միտված պոտենցիալ գործողություն, որը կապված է ստորոգյալի որոշակի բառային իմաստի հետ²²:

Մ. Էրգինը նշում է, որ **-ma**, (**-me**)-ով անորոշը **-mak**, **-mek**-ով անորոշից տարբերվում է հետևյալ նուրբ առանձնահատկությամբ. **-ma**, **-me**-ն գործողություն ցույց չի տալիս, իսկ **-mak**, **-mek** ածանցը կազմում է գործողություն ցույց տվող գոյականներ (*hareket isimleri*): **-Ma**, **-me**-ի հիմնական գործառնությամբ «գործ» արտահայտող գոյականներ (*iş isimleri*) կազմելն է. *al-ma* վերցնելը, *yap-ma* անելը, *oku-ma* ընթերցելը, *yaz-ma* գրելը, *gel-me* գալը, *git-me* գնալը, *geç-me* անցնելը, *eri-me* հալվելը²³: Թուրք լեզվաբանը **-ma**, **-me**-ն **-mak**, **-mek**-ից ավելի կենսունակ ածանց է համարում, քանի որ դրանով կազմված բայանունը պարունակում է ավելի շատ գոյականական հատկանիշներ, քան թե **-mak**, **-mek**-ի կազմված գոյականը: **-Mak**, **-mek**-ը, պետք է ասել, որ անորոշություն արտահայտող բառակազմական (վերջ)ածանց է, որն ավելանում է միայն բայի արմատին և հիմքերին²⁴: Մ. Էրգինը, որպես կարևոր հատկանիշներ, առանձնացնում է նաև հետևյալը. 1. **-ma**, **-me** ածանցով բայանունը (իմա՝ անորոշ դերբայը) **-mak**, **-mek**-ի նման դրսևորում է գոյականի (անվան) առանձնահատկություններ, 2. **-mak**, **-mek**-ով կազմված բայանունը չի ստանում դեմք և չի դառնում խնդիր, 3. իսկ **-ma**, **-me**-ն ոչ թե գործողություն է արտահայտում, այլ այդ գործողությամբ կազմված գործունեություն արտահայտող անուն, 4. **-ma**, **-me**-ով կազմված անուններն ունեն գոյականական և անձականական կիրառություններ՝ *dondurma* պաղպաղակ, *kavur-ma* դավլումա, *dol-ma* դոլմա, *dol-ma kalem* ինքնահոս, *değ-me adam* հասարակ մարդ, *süz-me göz* թախծոտ աչք, *damdan düş-me lâf* անսպասելի (անակնկալ) խոսք և այլն, 5. **-mak**, **-mek**-ով կազմված ձևերը, բացառությամբ մի քանի օրինակների, չեն կարող ունենալ գոյականական և հատկապես անձականական կիրառություն²⁵:

-Ma, **-me** ածանցով անորոշը նախադասության մեջ կարող է հանդես գալ որպես՝ 1. ենթակա՝ ... *gizlici kaçmam ve geceyi dışarıda geçirmem*

²² Նույն տեղում, էջ 455:

²³ **Ergin M.**, նշվ. աշխ., էջ 176:

²⁴ Նույն տեղում: **Дмитриев Н. К.**, *Строй турецкого языка*, Л., 1939, с. 40-41.

²⁵ Նույն տեղում:

mektepe büyük bir hadise olmuş. -Իմ գաղտնի *փախուստը* (փախչելը) և զիշերը դրսում իմ *անցկացնելը* դպրոցում խոշոր իրադարձություն է դարձել: 2. Անվանական ստորոգյալ՝ Bu benim için pek te hoş olmayan bir gülümseme idi. - Սա ինձ համար ոչ այնքան հաճելի մի ժպիտ էր: 3. Ուղիղ խնդիր՝ (ստանում է հայցական հոլովի ածանց): Gelmeyeceğini, yemeğe beklemememi telefon etti. - Հեռախոսով հայտնեց, որ չի գալու (բառացի՝ իր չգալը), և որ ես չսպասեմ (իրեն) ճաշին: 4. Անուղղակի խնդիր՝ (ստանում է տրական հոլովի ածանց): Պատկանելության և տրական հոլովի հետ միասին գործածվելով՝ անորոշի այս ձևը արտահայտում է ժամանակի կամ տեղի հանգամանք (Mektebi bitirmeme çok az kalmıştı. - Իմ դպրոցն ավարտելուն շատ քիչ (ժամանակ) էր մնացել):

Պատկանելության և բացառական, ներգոյական հոլովների ածանցներով գործածվելու դեպքում նախադասության շղթայում հանդես է գալիս ընդարձակ անուղղակի լրացման պաշտոնում²⁶ (Doktora gitmende ısrar ediyorum. - Ես պնդում եմ, որ դու բժշկի գնաս / Ես պնդում եմ քո՝ բժշկի գնալը): 5. **-Ma, -me** անորոշը կարող է հանդես գալ *için*, *üzere=üzre*, *ile* հետադրությունների հետ միասին: **-Ma, -me** անորոշ+*için* (*üzere//üzre*) հետադրություն կառույցն արտահայտում է նպատակի պարագա²⁷ (Fakat başka türlü yapabilmem için başka türlü bir insan olmam lâzımdır.-Մակայն, ուրիշ կերպ վարվել կարողանալու համար, հարկավոր է, որ բոլորովին այլ մարդ լինեմ):

-Ma, -me անորոշ+*için* հետադրությանը զուգահեռ օգտագործվում է **-ma, -me** անորոշ+տրական հոլովի ածանց ձևը [Sormaya//sormak için (*üzere//üzre*) geldim.- Ես եկա, որ հարցնեմ]:

Ա. Կոնտնոլը գրում է, որ անորոշի՝ **-ma, -me**-ով ձև+պատկանելության ածանց+*ile* հետադրություն կառույցն արտահայտում է ընդարձակ ժամանակի պարագա (Bu sefer de onların görünmesiyle meydanın boşalması bir oldu. - Այս անգամ էլ, երբ նրանք երևացին, հրապարակն անմիջապես դատարկվեց)²⁸:

Հատկապես դեպի ապագան միտված գործողությունները մատնանշելիս՝ որպես **-ma**-ով անորոշին զուգահեռ ձև կարող է օգտագործվել **-dik** ածանցով բայի անդեմ ձևը²⁹:

-İş ածանցը, ավելանալով բայահիմքին, կազմում է անորոշ դերբայ, որը նախադասության մեջ հանդես է գալիս ենթակայի և խնդրի շարահյուսական պաշտոններում և կարող է ստանալ հոլովական ածանցներ,

²⁶ Кононов А. Н., նշվ. աշխ., էջ 458:

²⁷ Նույն տեղում, էջ 460: Տե՛ս նաև Սաֆարյան Ա., Սողոմոնյան Ա., Լոբնազյան Ս., նշվ. աշխ., էջ 98-99:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Соколов С. А., Анализ значений и употребления отглагольных имен **ма** и **ме** в сравнительном плане (Труды ВИИЯ) N 6, М., 1954, с. 67-79.

դառնալ ստորոգյալ (օժանդակ բայի հետ գործածվելով), ինչպես նաև նախադասության ծավալուն անդամ: Ի տարբերություն նախորդ անորոշի ձևերի՝ **-is** ածանցով անորոշ դերբայը ստանում է նաև սեռական հոլովի ածանց: Անորոշի այս ձևը, ըստ Ա. Կոնոնովի դիտարկման, իր գործառույթով մոտ է **-me**, **-ma** ածանցով անորոշին, սակայն արտահայտում է ոչ այնքան գործողության ընթացք, որքան ձև, գործողության կատարման եղանակ, միջոց³⁰: Մ. Էրգինը այս ածանցը համարում է կենսունակ. «այն նախորդների պես ներառում է բոլոր բայական արմատներն ու հիմքերը»: Շարունակելով անորոշի այս ձևերը դիտարկել որպես գոյականի դրսևորում՝ Էրգինը նշում է, որ «այս երեք ածանցներն առանձին տեղ են զբաղեցնում բայից գոյական կազմող ածանցների շարքում: Սակայն սրանց հիմնական գործառույթը գործողություն և շարժում ցույց տվող գոյականներ կազմելն է: Քանի որ բայական արմատներն ու հիմքերը չունեն ինքնուրույն կիրառություն, ապա այս ածանցների միջոցով կազմվում են գործողություն կամ գործողություն ցույց տվող գոյականներ: Իմաստային տեսանկյունից մյուս բառակազմական (վերջ)ածանցների նման մեծ փոփոխություններ առաջ չեն բերում և մտնում են գոյական խոսքի մասի մեջ»³¹: Մ. Էրգինը նշում է նաև, որ այս երեք ածանցները գործածության տեսանկյունից ունեն որոշ տարբերություններ: **-Mak**, **-mek**-ը ամենատարածված «բայանուն» կազմող ածանցն է, որը ցույց է տալիս գործողություն, **-ma**, **-me** ածանցը ունի ածականական կիրառություն: «Կարելի է ասել, որ **-is**, **-iş**, **-uş**, **-üş** ածանցները գրեթե կիրառվում են **-ma**, **-me** ածանցի նման և կազմում գործունեություն (շարժում) արտահայտող բայանուններ՝ **al-is** վերցնում (վերցնելը), **gel-is** գալը, **qalırsın** (ժամանում), **ara-y-is** փնտրելը (փնտրտուք, որոնում), **söyle-y-is** խոսելը (խոսակցություն), **otur-uş** նստելը (նստելաձև), **oku-y-uş** ընթերցելը (ընթերցում), **öksür-üş** հազալը, **yürü-y-üş** քայլելը, քայլք (երթ, քայլերթ): Պետք է ասել, որ կիրառության տեսանկյունից այս ածանցը ավելի հարմար է և ձեռնտու, քան **-ma**, **-me**-ով կազմված ձևերը: Նշենք նաև, որ **-is**, **-iş**, **-uş**, **-üş** ածանցը ածականական կիրառություն չունի»³²:

-İş-ով անորոշ դերբայը կարող է ստանալ պատկանելության ածանցներ և դառնալ ենթակա (**Girişler** buradan, **çıkışlar** arkadan.- Մուտքը՝ այստեղից, ելքը՝ հետևի կողմից), **-is** անորոշը պատկանելության և տրական հոլովի ածանցներով կարող է դառնալ անուղղակի խնդիր (**çocuğın gidişine, gelişine, oturuşuna, kalkışına, her şeyine karışıyor**.- Միջամտում է ամեն ինչին՝ թե՛ երեխայի գնալուն, թե՛ գալուն, թե՛ նստելուն և թե՛ կանգնելուն): **-İş**-ով անորոշը կարող է ստանալ պատկանելության և ներգոյական հոլովի ածանցներ (**Kitap satışlarımızda büyük artış olacak**. - (Մեր) գրքի վաճառքում մեծ աճ է լինելու): **-İş**-ով անորոշ դեր-

³⁰ Кононов А. Н., նշվ. աշխ., էջ 462-463:

³¹ Ergin M., նշվ. աշխ., էջ 177:

³² Նույն տեղում:

բայը անորոշի վերոնշյալ ձևերից տարբերվում է նրանով, որ ստանալով բառակազմական ածանց կազմում է նոր բառեր՝ **ileri görüşlü** առաջադիմական հայացքներ ունեցող (մարդ), **elverişli** ձեռնտու, **anlayışlı** ըմբռնող, խելամիտ, **kullanışlı** գործնական, հարմար:

Ամփոփելով կարող ենք ընդհանրացնել, որ ժամանակակից թուրքերենի անորոշ դերբայները կամ գործողության անունները հետաքրքրական ծավալում ունեցող բայի դրսևորման ձևեր են, որոնք՝ ա) իրենց առանձին գործառնություններով հարաբերակից են գոյականին, բ) հոլովվում են և դառնում բայական անդամի լրացում, գ) ստանում բայանվանական վերջադրություններ (ածանց, մասնիկ), դ) ըստ էության, խոսքի մեջ հանդես են գալիս երկփեղկված ձևիմաստային արժեքներով, որոնք հատկանշական են և՛ բային, և՛ գոյականին, ե) իբրև խոսքի մաս բայեր են, որովհետև չեն կարող ըմբռնվել առանց բայական քերականական կարգերի՝ սեռ կերպ, ժամանակի հասկացություն, տեսանկյուն:

Անորոշ դերբայը շատ լեզուներում (ներառյալ՝ հնդեվրոպական), մոտ է բայանուններին, այն ունակ է ստանալ հոլովական վերջավորություններ, սակայն, ի տարբերություն բայանունների, չի կարող ունենալ լիակատար հոլովական հարացույց: Թուրքերենի անորոշը հանդես է գալիս ուղղական, տրական, հայցական, բացառական, ներգոյական հոլովներով, չի ստանում սեռական հոլովի ածանց՝ բացառություն է -is ածանցով անորոշը: Նշենք նաև, որ ժամանակակից թուրքերենում անորոշի այս ձևից կազմված մի շարք բառեր գիտակցվում են որպես քարացած գոյականներ՝ (yayılış տարածում, girdiş մուտք, çıkış ելք, görüş հանդիպում):

МОРФОЛОГИЧЕСКИЕ И СИНТАКСИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ НЕОПРЕДЕЛЕННОГО ИНФИНИТИВА СОВРЕМЕННОГО ТУРЕЦКОГО ЯЗЫКА

АМИРХАНИЯН Л. А., САФАРЯН А. В.

Резюме

Для усовершенствования процесса преподавания турецкого языка армяноязычным студентам и разработки учебников, учебных и методических пособий важное значение имеет как сравнительное изучение морфологических и синтетических особенностей неопределенного инфинитива в армянском и турецком языках, так и выявление идентичных коррелятов при переводе текста с турецкого на армянский, а также анализ соответствующей терминологии, используемой турецкими, западными, российскими и армянскими лингвистами.